



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

« _____ 20 թ.

N _____

Վանաձորի բնապահպանական տեղեկատվության
հասարակական <<Օրհուա>> կենտրոնի
համակարգող Պերճ Բոջուկյանին

Ի պատասխան Ձեր 2014 թվականի նոյեմբերի 24-ի
N Վ-007/2014 հարցման

Հարգելի պարոն Բոջուկյան,

2014 թվականի աշնանը <<Հայանտառ>> ՊՈԱԿ-ի <<Գուգարքի
անտառտնտեսություն>> մասնաճյուղում նախատեսված է եղել իրականացնել
անտառատնկման աշխատանքներ շուրջ 37 հա տարածքում:

2014 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ <<Գուգարքի անտառտնտեսություն>>
մասնաճյուղում իրականացվել են հողի նախապատրաստման աշխատանքներ 35
հեկտար մակերեսի վրա և անտառատնկման աշխատանքներ 10 հեկտար մակերեսի
վրա: Նոյեմբեր ամսվա տվյալները կատարված աշխատանքների ծավալի
վերաբերյալ կարող ենք ներկայացնել դեկտեմբեր ամսին:

1 հա հողի նախապատրաստման և տնկման աշխատանքների արժեքը կազմում
է 476,3 հազ. դրամ:

Հարգանքով՝

Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Կատ.՝ Տեղեկատվության եւ հասարակայնության հետ
կապերի բաժնի առաջատար մասնագետ Ե.Խաչատրյան
հեռ. (011) 521524